



2009թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն այցելել է «Կարմիր բլուր» պատմական հնավայր՝ անձամբ ծանոթանալու հնավայրի պահպանման խնդիրներին: Դեռ 2009-ի սկզբին կառավարության վերահսկողական ծառայությունը ուսումնասիրել էր Կարմիր բլուրի տարածքն ու արձանագրել, որ մի կողմից շուրջ 40 հա հնավայրի մի մասը ծածկվել է շինարարական աղբով, մյուս կողմից էլ հարակից գերեզմանատունը զավթել է մոտ 1.5 հա տարածք:

«Էրեբունի» պատմահնագիտական թանգարանի տնօրեն Գագիկ Գյուրջյանը, վարչապետին ներկայացրել է հնավայրի խնդիրները եւ նշել, որ պատմահնագիտական այս վայրն այսօր խիստ հետաքրքրական է հատկապես գիտական ուսումնասիրությունների տեսանկյունից, քանի որ մ.թ.ա. 6-րդ դ. կառուցված Թեյշեբայնի ամրոցը մեզ է հասել հնարավորինս անաղարտ պահպանված վիճակում: Առկա իրավիճակի պատճառով Կարմիր բլուրում պեղումներն այսօր դադարեցված են:

Ի՞նչ ապագա կարող է ունենալ պատմական այս հնավայրը, և որո՞նք պետք է լինեն այն «վերակենդանացնելու» ու պահպանելու առաջին քայլերը. այս հարցերը պարզելու համար վարչապետն առաջին խորհրդակցությունն անցկացրել է հենց բլուրի տարածքում՝ մշակույթի նախարարի, Երևանի քաղաքապետի և այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ: Կառավարության ղեկավարին ներկայացվել է, որ գերեզմանի եւ բլուրի սահմանազատման խնդիրը կարգավորվել է:

Տիգրան Սարգսյանն աշխատանքային այցի ավարտին լրագրողներին տեղեկացրել է, որ այս փուլում կառավարության համար առաջնահերթ է հնավայրի պահպանության կազմակերպումը. «Մոտակա ամիսներին կմշակվի ռազմավարական ծրագիր, որով երեքհազարամյա պատմություն ունեցող մշակութային արժեքը նախ կպահպանենք, իսկ ավելի ուշ՝ կփորձենք գրավիչ դարձնել տուրիստների համար»:

Վարչապետը հավելել է նաև, որ Ասիական Բանկի հետ պայմանավորվածության համաձայն, Կարմիր բլուրի սահմանով ճանապարհ է կառուցվելու, ինչը նույնպես նպաստելու է, որ տարածքը գտնվի ուշադրության կենտրոնում: